# «ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ
# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

*Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:*

*Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:*

**1.Թեմայի անվանում, ժամաքանակը**
**2.Նպատակները**
**3.Խնդիրները**
**4.Վերջնարդյունքները**
**5.Բովանդակությունը**

## «ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ
**(շաբաթական՝ 2 ժամ, տարեկան 68 ժամ)**
**5-8 դասարաններ**

| **Աշխատանք բնական և արհեստական նյութերով (15 ժամ)** |
|---|
| **Նպատակը** |
| • Դաստիարակել գեղագիտական ճաշակ:<br>• Ինքնուրույն ստեղծարար աշխատելու կարողություն:<br>• Գույների ընտրություն և գեղարվեստական ճաշակի զարգացում: |
| **Խնդիրներ** |
| • Ծանոթացնել բնական և արհեստական նյութերին:<br>• Սովորեցնել կոկիկ աշխատել, պահպանել անվտանգ աշխատելու կանոնները: |
| **Վերջնարդյունքներ** |

| |
|---|
| • Գնահատել բնական ռեսուրսները:<br>• Կարողանա ճիշտ օգտագործել նյութերը: |
| **Բովանդակություն** |
| • Կոներով պատրաստել կոմպոզիցիաներ (5 ժամ)<br>• Աշխատանք թղթով և ստվարաթղթով (5 ժամ)<br>• Աշխատանք մանածագործական նյութերով (5 ժամ) |

| **Հագուստի պատրաստման տեխնոլոգիա (8 ժամ)** |
|---|
| **Նպատակը** |
| • Ներկայացնել հագուստի պատմությունը,նրա նշանակությունը մարդու կյանքում:<br>• Ուսումնասիրել բուսական և կենդանական ծագում ունեցող գործվածքների հատկություններին՝ ըստ արտաքին տեսքի, թարս և շիտակ կողմերի: |
| **Խնդիրներ** |
| • Ծանոթացնել կարի տեսակներին:<br>• Ճանաչեն և գործածեն կտրելու և կարելու համար անհրաժեշտ գործիքները:<br>• Ծանոթացնել գծագրերի կառուցման հաժորդականությանը: |
| **Վերջնարդյունքներ** |
| • Կկարողանան կառուցել գծագրեր:<br>• Կսովորեն կարել պարզ մոդելներ, պայուսկներ, դրամապանակներ:<br>• Կզարգան ինքնուրույն աշխատելու կարողունակությունները: |
| **Բովանդակություն** |
| • Կարել պարզ գոգնոցներ (2 ժամ)<br>• Կարել էկո պայուսակներ (2 ժամ)<br>• Կարել խոհանոցային թաթմաններ (2 ժամ)<br>• Կարել շապիկներ (2 ժամ) |

| **Ասեղնագործություն (15 ժամ)** |
|---|
| **Նպատակը** |
| • Հաղորդել տեղեկություններ ասեղնագործության մասին:<br>• Սովորեցնել ստեղծել պարզ նախշեր: |

| |
|---|
| • Կատարել թելերի ճիշտ ընըրություն: |
| **Խնդիրներ** |
| • Սովորողները կծանոթանան ասեղնագործության մեջ օգտագործվող գործվածքների, թելերի և ասեղների տեսակներին:<br>• Կծանոթանան անհրաժեշտ գործիքներին և հարմարանքներին:<br>• Կզարգացնեն զարդանախշը փոխադրելու, պարզ նախշեր ասեղնագործելու կարողունակություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| • Սովորողները կիմանան գործվածքի վրա էսքիզի փոխանցման ձևերը:<br>• Կկատարեն ավանդական և ժամանակակից զարդանախշերի էսքիզներ:<br>• Տարբեր նյութերով կկատարեն ապլիկացիոն աշխատանքներ: |
| **Բովանդակություն** |
| • Ասեղնագործել անձեռոցիկներ (5 ժամ)<br>• Ասեղնագործել շապիկների վրա (5 ժամ)<br>• Ասեղնագործել հայկական ավանդական զարդանախշերով սփռոցներ (5 ժամ) |

| **Հելունագործություն (15 ժամ)** |
|---|
| **Նպատակը** |
| • Ծանոթացնել հելունագործության գործընթացին:<br>• Կատարել թելերի և գործիքների ընտրություն: |
| **Խնդիրներ** |
| • Կկարողանան տարբերել թելերի ամրությունը:<br>• Ճիշտ կնտրեն թելերը և գործիքները:<br>• Կսովորեն կոկիկ աշխատել: |
| **Վերջնարդյունքներ** |
| • Կկարողանան գեղարվեստական աշխատանքներ կատարել՝ օգտվելով նորաձևության ամսագրերից:<br>• Կնպաստի առանցքային կոմպետենցիաների զարգացմանը, որը կբերի մասնագիտական կողմնորոշում: |
| **Բովանդակություն** |
| • Գործել խոհանոցային բռնիչներ (5 ժամ)<br>• Գործել մանկական գլխարկներ (5 ժամ) |

| |
|---|
| • Գործել մազակալներ (5 ժամ) |

| **Շյուղագործություն (15 ժամ)** |
|---|
| **Նպատակը** |
| • Ծանոթացնել շյուղագործության գործընթացին:<br>• Կատարել թելերի և գործիքների ընտրություն: |
| **Խնդիրներ** |
| • Ծանոթանա նոր գործվածքների և դրանց հատկությունների մասին:<br>• Տարբերի կենդանական, բուսական և սինթետիկ թելերը: |
| **Վերջնարդյունքներ** |
| • Ճիշտ և անվտանգ օգտագործել շյուղագործության համար անհրաժեշտ գործիքներն ու հարմարանքները:<br>• Կարողանան գործել հագուստներ և անհրաժեշտ այլ իրեր: |
| **Բովանդակություն** |
| • Գործել գուլպաներ (5 ժամ)<br>• Գործել գլխարկներ (5 ժամ)<br>• Գործել մանկական այլ իրեր (5 ժամ) |